ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՏՆՕՐԵՆ՝_Ք.ԱՌԱՔԵԼՅԱՆ

<< >>_____2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Աբովյանի Խ.Աբովյանի անվան թիվ 1 ավագ դպրոցի 10Բ դասարանի դասղեկ Աիդա Հարությունյան

<<2023_2024_>> ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ- ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Xբ ասարանում սովորում են 19 աշակերտներ: Բոլորն էլ կազմակերպված, դաստիարակված, խելացի, աշխույժ, կյանքով լի երեխաներ են: Ընկերասեր են, հարգում են միմյանց, ունեն արժանապատիվ կեցվածք: Սովորում են իրենց ուժերի ներածին չափով:

2.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ուսումնադաստիարակչական նպատակով պարբերաբար հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հաճախակի հրավիրել ծնողական ժողովներ, ծնողներին ևս մասնակից դարձնել ուսումնական գործընթացին: Կոլեկտիվում պահպանել համերաշխություն, խրախուսել լավ սովորող ու կարգապահ աշակերտներին: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (մաքրություն, կարգապահություն, աշխատասիրություն, համագործակցություն):

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Հոգևոր արժեքներ՝հող, հայրենիք, լեզու, ծնող, հավատ, ավանդույթներ: Զրույցներ հայրենասիրության, հավատի, մեր ժողովրդի հավերժության, մայրենի լեզվի անաղարտության և այլ թեմաներով: Հոգևոր արժեքները որպես մեր ժողովրդի հավերժության գրավականներ:

3.2գեղագիտական դաստիարակություն

Արվեստի դերը մարդու ձևավորման գործում, անձի ստեղծ. և հոգևոր ներաշխարհի, գեղեցիկի ընկալում: Երեխաների գեղագիտական ճաշակի ձևավորման համար այցելություն տարբեր մշակութային վայրեր:

3.3 ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Օգնել երեխաներին զալ այն համոզման, որ իրենք հայրենիքի զինվորներ են և իրենց ուսմամբ և աշխատանքով և հետագայու նաև ծառայելով պիտի նվիրվեն հայրենիքին: Հայրենիքը կանգուն է զինվորներով:

3.4 ֆիզիկական դաստիարակություն

Խրախուսել երեխաների մասնակցությունը տարբեր սպորտային խմբակների, որովհետև առողջ ոգի կարող է լինել միայն առողջ մարմնում:

3.5 աշխատանքային դաստիարակություն

Աշխարհը աշխատանքով է կանգուն, մարդը գեղեցիկ է արարմամբ: «Մարգարիտը վերքից է, որ կծնի, և խունկը այրվելով է, որ իր անուշ հոգին կբուրե»: Ամեն ոք պետք է մասնակցի հայի արարմանը:

3.6բնապահպանական դաստիարակություն

Զրույց էկոլոգիայի մասին: Պահպանենք բնությունը:

Զրույց «Կանաչների ընկերության» մասին:

4.ԴՊՐՈՑ- ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Ամուր պահել կապը ծնողների հետ: Ծանոթանալ յուրաքանչյուր սովորոզի ընտանեկան վիճակին, սոցիալական վիճակին, պայմաններին և հնանավոնինս օգնել:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական Շաբաթներ՝	Ուսումնադաստիարակչական աշխատանքերի բովանդակությունը	Կատարման Ժամկետը	կատարող
5.09.2023	Դպրոցի կարգուկանոնի իրազեկում և ավագի ընտրություն		
12.09.2023	Զրույց <<Իմ իրավունքներն ու պարտականությունները>> թեմայով		
19.09.2023	Զրույց <<Ես եմ տերը իմ երկրի>> թեմայով		
26.09.2023	Ուսուցչի դերը անձի ձևավորման գործում		
3.10.2023	<<Ի՞նչ է հանդուրժողականությունը>> թեմայով		
10.10.2023	Դաստիարակել միասնական և համախմբված կոլեկտիվ		
17.10.2023	Զրույց <<Արժանապատվություն>> թեմայով		
31.10.2023	Զրույց <<Տոներ և ավանդույթներ>> թեմայով		
7.11.2023	Ինչպես քաջալերել աշակերտներին		
14.11.2023	Զրույց <<Էթիկայի կանոններ>> թեմայով		
21.11.2023	Զրույց <<Ուր եմ գնալու սովորելու>> թեմայով		
28.11.2023	Զրույց <<Պատասխանատու քաղաքացի>> թեմայով		
5.12.2023	Կազմակերպչական հարցեր		
12.12.2023	Զրույց <<Ինչն է ինձ ուրախացնում>> թեմայով		
19.12.2023	I կիսամյակի ամփոփում		

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՏՆՕՐԵՆ՝_Ք.ԱՌԱՔԵԼՅԱՆ

<< >>_____2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Աբովյանի Խ.Աբովյանի անվան թիվ 1 ավագ դպրոցի 10զ դասարանի դասղեկ Փաշիկյան Ռուզան

<<2023_2024>> ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ- ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ__ Դասարանը բաղկացած է 17 աշակերտից՝ 4 տղա և 13 աղջիկ : Ընդհանուր առմամբ աշակերտները ունեն լավ ընդունակություններ: Կան գերազանց սովորող աշակերտներ: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են, կարգապահ են: Աշակերտները ունեն տարբեր ներգրավվածություն տարբեր ոլորտում ՝ սպորտ, պարարվեստ, ռոբոտաշինություն: Նախաձեռնող երեխաներ են, իրենց առջև դրված պատասխանատվության գիտակցում ունեն: Դասարանում չկան դժվար

դաստիարակվող աշակերտներ: Բոլոր աշակերտներն էլ յուրահատուկ են, բանիմաց, հետաքրքրասեր:

2.***ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ*** _ Իմ նպատակն է՝ աշխատել դասարանի բարձր առաջադիմության ուղղությամբ, ձևավորել կարգապահ, կազմակերպված, հանդուրժող, համերաշխ կոլեկտիվ, նպաստել աշակերտների ընդհանուր մտահորիզոնի ընդարձակմանը, աշխատել բարոյահոգեբանական կերտվածքի զարգացման ուղղությամբ, նպաստել ուսման նկատմամբ գիտակցական վերաբերմունքի ձևավորմանը, ձևաորել կոլեկտիվ, որտեղ բոլորը հարգում են մեկը մյուսի կարծիքը: Ուստարվա ընթացքում նախատեսված է կատարել ճանաչողական բնույթի աշխատանքներ: Կազմակերպել էքսկուրսիաներ թանգարաններ, պատմամշակութային հուշարձաններ: Ուշադրություն դարձնել էկոլոգիական դաստիարկության վրա և կարողանալ ստեղծագործաբար կիրառել ձեռք բերած գիտելիքները: Ձևավորել սեփական մշակույթի նշանակությունը գիտակցող քաղաքացի: Զարգացնել սովորողների կարողություններն ու հմտությունները, ստեղծել պայմաններ և տալ հնարավորություն ստեղծագործելու: Կազմակերպել աշխատանքներ դասարանի ակտիվի հետ, աշխատել թույլ սովորող աշակերտների հետ: Ուսումնադաստիարակչական նպատակով մշտապես հետևել սովորողների վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների առաջադիմության բարձրացմանը: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն):

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3,1 հոգևոր դաստիարակություն _ Յուրաքանչյուր հայի համար հոգևոր հարստություն իր հավատքն է առ Աստված, հավատքն է Առաքելական եկեղեցու նկատմամբ: Այս ամենը սկսվում է մկրտությամբ, եկեղեցի այցելելով, եկեղեցում մոմավառության կուլտուրայով: Դասարանում ստեղծել լավ մթնոլորտ: Սովորեցնել հարգել միմյանց, լինել ազնիվ, ճշտախոս, պատասխանատու, միշտ պատրաստ օգնելու ընկերոջը: Սովորեցնել Աստծո 10 պատվիրանները և ուղղություններ տալ՝ կյանքում դրանք ճիշտ կիրառելու: Կարևորեն բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, կարողանան գնահատել գեղեցիկը, բարին, ճշմարիտը: Զերծ մնան վատ արարքներից, լինեն մարդասեր, ընկերասեր, հանդուրժող: Կազմակերպել այցեր հոգևոր վայրեր:

3.2 գեղագիտական դաստիարակություն- Հաճախակի կազմակերպել էքսկուրսիաներ և այցելություն թանգարաններ, կազմակերպել տարիքային կինոդիտումներ և ներկայացումների դիտումներ, դրանք քննարկել և վերլուծել: Գեղեցիկի հանդեպ սերը պետք է սերմանել դեռ մանկուց: Աշակերտը պետք է սովորի գնահատել արվեստի գոհարները, ընկալի գեղեցիկը, պահպանի ու փոխանցել հաջորդ սերունդներին:

3.3- ռազմա-հայրենասիրական դաստիարակություն— Աշակերտը պետք է գիտակցի ՀՀ աշխարհաքաղաքական դիրքի առանձնահատկությունները, հարևան երկրների հետ մեր

բարդ փոխհարաբերությունները և պատրաստ լինի հայրենիքի սահմանների պաշտպանությանը՝ պահելով նրա անառիկությունը: Հայ զինվորը իր հայրենասիրությամբ, իր սխրանքներով պետք է օրինակ լինի ամբողջ աշխարհի համար: Իմանան մեր երկրի պատմական անցյալը, ճանաչեն հերոսներին, հարգեն Հայաստանի պետական խորհրդանիշերը, իմանան պետական տոները, լինեն հայրենասեր և ազգասեր: Կազմակերպել այցելություն Եռաբլուր պանթեոն:

3.4 ֆիզիկական դաստիարակություն -- « Առողջ մարմնում առողջ հոգի » կարգախոսը ուղղորդում է ֆիզիական դաստիարակության գործում: Կարևորել ֆիզիկական ակտիվության դերը մկանների զարգացման գործում և ճիշտ վերաբերմունք ձևավորել ֆիզկուլտուրայի դասերի և սպորտի նկատմամբ; Հաճախակի զրուցել առողջ ապրելակերպի, անձնական հիգիենայի մասին: Բացատրել և պահանջել, որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը, կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների միջոցով: Խրախուսել տարբեր սպորտային խմբակների հաճախումը, մասնակից դարձնել սպորտային միջոցառումներին : Առողջ ապրելակերպի մասին անցկացնել զրույցներ: Ելնելով տարիքային առանձնահատկություններից՝ պետք է զերծ մնան վատ սովորություններից և վարեն առողջ ապրելակերպ:

3.5 աշխատանքային դաստիարակություն-- Կարևորել աշխատանքի դերը մարդու կյանքում, դրական վերաբերմունք ձևավորել աշխատանքի նկատմամբ, իմանալ աշակերտների նախասիրությունները, օգնել մասնագիտական կողմնորոշմանը: Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Օգնել աշակերտներին ձեռք բերել այնպիսի գիտելիքներ և կարողունակություններ , որ նա կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում: Կատարած աշխատանքից հաճույք և, ինչու չէ , նաև օգուտ ստանալու հմտություն ձևավորել: Համատեղ աշխատելու կուլտուրան սերմանվում է օրինակ շաբաթօրյակներով, խմբային աշխատանքներով: Դասարանում պահպանել մաքրություն, կարողանալ գնահատել իր և ընկերոջ կատարած աշխատանքը, պահպանել և անհրաժեշտության դեպքում վերանորոգել գույքը: Ձևավորել բարեխիղճ վերաբերմունք դեպի աշխատանքը:

3.6 բնապահպանական դաստիարակություն – « Բնությունը մեր տունն է»: Բնությունը պետք է ճիշտ օգտագործել, և բնապահպանական ճիշտ միջոցառումների ընտրությոնը պետք է յուրացնել դպրոցական ուսումնառության տարիներին: Այն կարելի է սկսել ծառատունկ կազմակերպելով, թափոնների տեսակավորման և երկրորդային վերամշակման մասին զրույցներ անցկացնելով, բնական ռեսուրսների օգտագործման տեսահոլովակներ դիտելով: Ներկայացնելով մեր մոլորակին սպառնացող էկոլոգիական աղետները, բացատրել, որ յուրաքնչյուրս պատասխանատու ենք մեր չափով բնության, նրա պահպանման, չաղտոտման, խնամքի համար: : Բնությանը չվերաբերվել սպառողի հոգեբանությամբ:

4,**ԴՊՐՈՑ- ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ**— Համագործակցել ծնողների հետ, կանոնավոր անցկացնել ծնողական ժողովներ, իմանալ սովորողների ընտանքիների սոցիալական պայմանների մասին: Ամուր պահել ծնող-երեխա-դասղեկ-ուսուցիչ կապը: Ներգրավել ծնողներին

ուսումնադաստիարակչական աշխատանքներում և դասարանական միջոցառումների կազմակերպմանը: Ծնող-դպրոց սերտ կապի արդյունքում ձևավորվում է համապարփակ կրթություն: Սովորողի դաստիարակությունը երկկողմանի պրոցես է: Առանց ընտանիք-դպրոց կապի լավագույն արդյունքի հնարավոր չէ հասնել: Ծնող- ուսուցիչ փոխհարաբերության հիմքում պետք է լինի սովորողի որպես մարդ կայանալու, ՀՀ քաղաքացի լինելու և կրթված, գիտակ անձ դաստիարակելու վեհ արժեքը:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական Ծաբաթներ՝	Ուսումնադաստիարակչական աշխատանքերի բովանդակությունը	Կատարման Ժամկետը	կատարողներ
Սեպտեմբեր			
1.09.2023	Նոր ուսումնական տարվա մեկնարկի կազմակերպչական աշխատանքներ. Դպրոցամուտ: Ծանոթացում դասարանի հետ:		
4__8	Դասարանական խորհրդի ձևավորում, խորհրդի նախագահի և դասարանի ավագի ընտրություն:		
11__15	Զրույց տարվա ընթացքում մեր անելիքների և սովորողների նախասիրությունների մասին:		
18__22	Անկախության տոն. «հայրենիքը սկսվում է ինձանից»՝ նպատակն է իմանան մեր երկրի պատմական անցյալը, ճանաչեն հերոսներին:		
25__29	« Ինչպես լինել լավ ընկեր » նպատակն է ձևավորել բարոյական արժեքներ:		
Հոկտեմբեր			
2__6	Անանուն շարադրություն ,,Եթե ես լինեի դպրոցի տնօրեն/դասարանի դասղեկ՝՝:		
9__13	«Իմ նախընտրած մասնագիտությունը» նպատակն է օգնել մասնագիտական կողմնորոշման հարցում:		
16__20	«Ազնիվ և անկեղծ հարաբերությունները մեր դասարանում » նպատակն է ամրապնդել բարոյական սկզբունքները սովորողների մոտ:		
Նոյեմբեր			

30.10_3.11	«Սպորտով զբաղվելը նորաձևությու՞ն է, թե՞ առողջության գրավական» նպատակն է սովորողների մոտ կարևորել ֆիզիկական ակտիվության դերը:		
6_10	«Ամեն ինչի սկիզբը սերն է» նպատակն է ձևավորել ազնիվ և անկեղծ հարաբերություններ:		
13_17	«Մարդու ինքնուրույնությունը՝ ինչպես է այն արտահայտվում» նպատակն է հասարակության լիարժեք անհատի ձևավորումը:		
20_24	«Դպրոցականը և համացանցը» նպատակն է զարգացնել սովորողների մոտ մեդիա գրագիտություն		
27_1.12	Էկոլոգիական դաստիարակություն «Թափոնների վերամշակում» նպատակն է ձևավորել ճիշտ վերաբերմունք բնության և շրջակա միջավայրի նկատմամբ:		
Դեկտեմբեր			
4_8	Տարբեր սերունդների անխուսափելի բախումներ և դրանց ճիշտ հանգուցալուծումները:		
11_15	«Ինձ չի հետարքրում դասը, երբ. . . » նպատակն է սովորողի մեջ ձևավորել հետաքրքրություն առարկայի հանդեպ:		
18_22	Տարեմուտյան մտորումներ: Ի՞նչ կուզեի գալիք տարում իմ ու աշխարհի համար:		

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՏՆՕՐԵՆ՝_Ք.ԱՌԱՔԵԼՅԱՆ

<< >>_____2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Աբովյանի Խ.Աբովյանի անվան թիվ 1 ավագ դպրոցի 10Ա դասարանի դասղեկ Արմինե Սմբաթյան

<<2023_2024_>> ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ- ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ__

2023 - 2024___ուումնական տարին մեկնարկեց հումանիտար հոսքի քսանվեց հոգուց բաղկացած աշակերտական համակազմով՝6 տղա և 20 աղջիկ։Մասնագիտական կողմնորոշման գործընթացը հիմնականում ավարտվել է, գրեթե բոլորը լծվել են դեպի նպատակ սլացող գործընթացի իրականացմանը։Գիտելիքի օրվանից իսկ սահմանվել են կրթական և դաստիարակչական որոշ սկզբունքներ,կազմակերպվել է հորդոր դաս, ուղենշվել են անելիքները։

2.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ _

_Աշխատանքները հիմնականում նախատեսվում են իրականացնել ի նպաստ կարգապահական, ուսումնական, մարդկային որակների կայունացմանն ու բարելավմանը: Զրույցները, քննարկումները, բանավեճերը, դասախոսությունները, մեդիագրագիտության սկզբունքների զարգացմանն ուղղված տարաբնույթ քննարկումները, ցերեկույթներն ու դաս-միջոցառումները հիրավի հետաքրքիր կդարձնեն մեր դպրոցական կյանքի այս տարին:

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3,1 հոգևոր դաստիարակություն _

Քննարկումներ մարդու ներաշխարհը հարստացնելու, հոգևոր արժեքների կարևորությունը գիտակցելու, հային հայ պահելու համար: Նախատեսվում է կազմակերպել տարաբնույթ էքսկուրսիաներ հայրենի բնօրրանում:Կազմակերպել այցելություններ մանկատներ, ծերանոցներ, մշակութային կենտրոններ:

3.2գեղագիտական դաստիարակություն-

Գրական գեղարվեստական ցերեկույթներ, միջոցառումներ,պատկերասրահների ստեղծում, ստեղծագործական կարողությունների խթանում, տեսաֆիլմերի դիտում և ստեղծում:

_3.3- ռազմա-հայրենասիրական դաստիարակություն—

Հերոսների խնկարկում, մեծարում, այցելություն ուխտատեղի՝ Եռաբլուր:
Համագործակցություն զինղեկի հետ: Ռազմական գիտելիքների պաշարի ամբարում, արտակարգ իրավիճակներում շուտ կողմնորոշվերու հակումների ձևավորում՝ տարաբնույթ խաղերի և հնարքների միջոցով:

3.4 ֆիզիկական դաստիարակություն

Համագործակցություն և միասնական պահանջների ձևավորում ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ:
Արշավների, նպատակային էքսկուրսիաների, մրցաշարերի կազմակերպում, մարմնակրթության դերի արժևորմանն ուղղված աշխատանքների կազմակերպում:

3.5 աշխատանքային դաստիարակություն

Հասարակական աշխատանքների կազմակերպում, աշխատանքի հանդեպ ճիշտ վերաբերմունքի ձևավորմանը նպաստող զրույցներ, միջոցառումներ,սեփական օրինակով ծառայելու պատրաստակամություն, սեփական նախաձեռնություններով հանդես գալու կամքի դրսևորում:

3.6 բնապահպանական դաստիարակություն–

Շաբաթօրյակների, ծառատունկի մասնակցություն, շրջապատը մաքուր պահելու, պարտեզի խնամքի աշխատանքներ կազմակերպելու աշխատանքների իրականացում:

4,ԴՊՐՈՑ- ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ—

Պարբերաբար հանդիպումների կազմակերպում, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների քննարկում, միասնական պահանջների ձևավորում՝ ի նպաստ ժամանակի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ քաղաքացի ձևավորելու գործի:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական Շաբաթներ՝	Ուսումնադաստիարակչական աշխատանքերի բովանդակությունը	Կատարման Ժամկետը	կատարողներ
4. 09-8. 09	Նոր ուսումնական տարի, կազմակերպչական աշխատանքներ, դասարանական խորհրդի ձևավորում, ավագի ընտրություն:	4. 09	Դասղեկ
11. 09-15. 09	Զրույց անելիքների մասին	11. 09	Դասղեկ. աշակերտ
18,09-22. 09	Անկախության մասին	18. 09	Դասղեկ
25. 09-29. 09	Պատերազմը չարիք է	25. 09	Աշակերտներ
02. 10-06. 10	Խաղաղության գինը	2. 10	Դասղեկ. աշակերտ
09. 10-13. 10	Ինչո՞վ եմ զբաղվում ազատ ժամանակ	9. 10	Դասղեկ. աշակերտ
16. 10-20. 10	Ի՞նչ եմ դառնալու	16. 10	Դասղեկ. աշակերտ
30. 10-03. 11	Մարդու արժեհամակարգ	30. 10	Դասղեկ. աշակերտ
06. 11-10. 11	Ինքնուրույնություն	06. 11	Դասղեկ. աշակերտ
13. 11-17. 11	Ժամանակի խնայողություն	13. 11	Դասղեկ. աշակերտ
20. 11-24. 11	Պատասխանատվություն	20. 11	Դասղեկ. աշակերտ
27. 11-01-12	Ինչ եմ ուզում	27. 11	Դասղեկ. աշակերտ
04. 12-8-12	Ուր գնալ սովորելու	04. 12	Դասղեկ. աշակերտ
11. 12-15. 12	Աշխատասիրություն	11. 12	Դասղեկ. աշակերտ
18. 12-22,12	Մտորումներ Ամանորի շեմին	18. 12	Դասղեկ. աշակերտ